ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2025թ. N_____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.259-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 04.03.2021թ. հ.13052024-01-0164 վկայական) Ռուբինյանց փողոցի հ.7 հասցեի գույքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2030 թվականի մայիսի 1-ը ժամկետով տրամադրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևանի Ռուբինյանց փողոցի հ.7 հասցեի գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

Ռուբինյանց փողոցի հ.7 հասցեի գույքը (6155քմ մակերեսով հողամաս և 4115.3քմ (3749.6քմ առողջապահական կենտրոն, 293.7քմ օժանդակ շինություն և 72քմ, 144 խ.մ. պարիսպ) մակերեսով շինություն) անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 04.03.2021թ. հ.13052024-01-0164 վկայականի համաձայն հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը 05.02.2025թ. հ.ՆՄ/ԱՀ-1-1/2816-2025 գրությամբ միջնորդություն է ներկայացրել Երևանի քաղաքաետարան՝ խնդրելով աջակցել Ռուբինյանց փողոցի հ.7 հասցեում գտնվող նախկին թոքաբանության կենտրոնի տարածքը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրելու հարցում՝ նշելով, որ նախարարությունը ցանկանում է քննարկվող տարածքում իրականացնել անօթևան անձանց կացարանով ապահովման ծառայությունների կազմակերպում, հաշվի առնելով անօթևան անձանց թվաքանակի աճը, նրանց տարաբնույթ հիմնախնդիրները և համապատասխան մասնագիտական ծառայությունների կազմակերպման, ինչպես նաև արժանապատիվ միջավայրի ապահովման անհրաժեշտությունը:

Ռուբինյանց փողոցի հ.7 հասցեում գտնվող տարածքը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրելու նպատակահարմարության հարցը քննարկվել է Երևան քաղաքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր», «Ազգային առաջընթաց», «Հանրապետություն» և «Մայր Հայաստան» խմբակցությունների կողմից: Խմբակցությունների կողմից առարկություններ չեն ներկայացվել և հարցի վերաբերյալ տրվել են դրական դիրքորոշումներ:

Ելնելով վերը շարադրվածից, ինչպես նաև ղեկավարվելով 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու եվ օտարման 2025 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ